

ԵՐԵՎԱՆԻ ՆՈՐԱԳԱՎԻԹ ԹԱՂԱՄԱՍԻ Ս. ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑՈՒ ՍԵՂԱՆԻ ՕԾՈՒՄԸ

Սեպտեմբերի 26-ին, շաբաթ օրը, Ս. Գևորգ Զորավարի տոնի առթիվ, Երևանի Նորագավիթ թաղամասի Ս. Գևորգ եկեղեցում հանդիսավորությամբ օծումը կատարվեց եկեղեցու խորանի Աստվածամոր նկարի:

Վաղ առավոտյան եկեղեցին լեցուն էր ուխտավորներով, որոնք եկել էին հայրենիքի տարբեր շրջաններից: Հանդիսությանը ներկա էին նաև սփյուռքահայ ուխտավորներ, Մայր Աթոռի բարեբարներ տեր և տիկին Տանձիկյանները, տեր և տիկին Շելեֆյանները, Բեյրութի կրոնասեր Տիկնանց Համախմբումի անդամուհիները, ամերիկահայ ուխտավորներ:

Ժամը 11-ին սկսվում է օծման արարողությունը: Օրվա պատարագիչն էր Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Արսեն եպս. Բերբերյանը, որը օծում է եկեղեցու Խորանն ու Աստվածամոր նկարը սրբալույս մեռոնով:

Օրվա հանդիսությանը մասնակցում էին նաև Արարատյան թեմի եկեղեցիների քահանա հայրեր: Ս. պատարագի երգեցողությունը կատարում էր եկեղեցու նորակազմ երգչախումբը՝ խմբավարությամբ Գևորգ Մուրադյանի:

«Հայր մեր»-ից առաջ Տ. Արսեն եպիսկոպոսը քարոզում է «Եկարք շինեսցուք սուրբ զիսորանս լուսոյ քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհին» շարականի բնաբանով:

Ս. Սեղանի օծման կնքահայրն է Հովհաննես Բաբայանը, իսկ Ս. Աստվածածնի նոր նկարի նվիրատուն՝ Հարություն Իլջյանը:

Տ. Արսեն սրբազանը գնահատանքի խոսք է ուղղում նվիրատուներին և եկեղեցու հոգևոր դասին, երգչախմբին և Եկեղեցական Խորհրդին ու նրա նախագահ տիար Արամ Մարգարյանին՝ նրանց եկեղեցանվեր գործունեության համար:

Ս. պատարագից հետո եկեղեցու հոգաբարձության կողմից տրվում է ճաշկերույթ՝ օրվա հանդիսության առիթով՝ որին ներկա են լինում եկեղեցական դասը, երգչախումբը, թեմական Խորհրդի անդամները և մասնավոր հրավիրյալներ:

Սրբազան հոր «Պահպանիչ»-ով ավարտվում է ճաշկերույթը:

Սեպտեմբերի 26-ի եկեղեցական հանդիսությունը ջերմ խանդավառություն է ստեղծում մայրաքաղաքի Նորագավիթ թաղամասի հավատացյալ ժողովրդի սրտում և մի նոր էջ ավելացնում Արարատյան թեմի եկեղեցական գործունեության պատմության մեջ:

Մի պահ եկեղեցու Սուրբ Խորանի օծման հանդիսությունից

Եկեղեցու վերանորոգումը ձեռնարկվել է Ամենայն Հայոց Կաթողիկոսության